ՊԱՏՏՕՆԱԿԱՆՔ

ԲԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 29 յուլիսի ընդ համարաւ 305, յանուն Գեր. Փոխանորդի Թեմակալին Հայոց Երևանայ, որով թոյլատրեցաւ ձեռնադրել զԱրամն Մելեանց ի քահանայ և կարգել ի պաշտօն Թեմ. Տեսչութեան եկեղ. Մխակ. ուսումնարանաց Հայոց վիճակին Երևանայ։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 5 օգոստոսի ընդ համարաւ 308 յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով թոյլատրեցաւ բանալ յԱխալքալաք գեղջ Գօրլոյ գաւառի զմիացեալ ուսումնարան օրիորդաց և հաստատեցան ի պաշտաման խնամակալութեան յիշեալ ուսումնարանի բարեպաշտուհի Տիկնայք՝ Ախալքալաքցի Կատարինէն Տէր Գոլստեան, Սոփիան Նազարեանց։ Տիխիսեցի Նատալիան Սպանդարեանց և Ոսկիհատն Տէր Յովհաննիսեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յ9 օգոստ. ընդ համարաւ 316 յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղ. ծխակ. միդասեան ուսումնարանին Նորաշէն Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Կուկիոյ բարեկրօն Դիւտ քահանայն Աղանեանց, յարգելի երեցփոխան եկեղեցւոյն և ճարտարապետ պատուելի Նիկողայոսն Յարութիւնեան Գրիգորեանց. իսկ յանձնափոխանորդ վերջնոյս՝ Պ. Ստեփաննոսն Յովհաննիսեան Աղունակեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յ9 օգոստոսի ընդ համարաւ 317 յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղ. ծխակ. երկսեռ ուսումնարանաց Վաղարշապատայ բարեկրօն Գրիգոր քահանայն Տէր Գրիգորեանց, պատուելի երեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն, աստիճանաւոր Ստեփաննոսն Մուշեղեանց և Յովհաննէսն Կարճիկեանց. իսկ

յանձնափխանորդս վերջնոցս՝ յարգելիք՝ Սահակն Գիւլիխան-դանեանց և Գրիգորն Էգէբեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 25 օգոստոսի ընդ համարաւ 327. յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղ. ծխակ. միդասեան ուսումնարանին տղայոց Ջալալ-օղլի գեղջ՝ բարեկրօն Եսայի քահանայն Տէր Յովհաննիսեան, յարգելի երեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և պատուելի Հայրապետն Տէր Յակոբեանց. իսկ յանձնափխանորդ վերջնոյս՝ յարգելի Գաբրիէլն Նազարեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 23 օգոստոսի ընդ համարաւ 328 յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով թոյլատրեցաւ բանալ յԱղքեօրփի գեղջ զմիդասեան ուսումնարան տղայոց և հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան յիշեալ ուսումնարանին բարեկրօն Մկրտիչ քահանայն Տէր Վարդանեանց, երեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և պատուելի Արզումանն Մատթէոսեանց. իսկ յանձնափոխանորդ վերջնոյս՝ յարգելի Սարգիսն Հայրապետեան։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 25 օգոստ. ընդ համարաւ 329 յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով հաստատեցաւ ի պաշտօն նախագահի խնամակալաց օրիորդական միդասեան միացեալ ուսումնարանի Ախալքալաք գեղջ Գօրւոյ գաւառի բարեկրօն Յովհաննէս սարգ քահանայն Տէր Դալաստեան։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 25 օգոստ. ընդ համարաւ 346 յանուն Գեր. Փոխանորդի Թեմակալին Հայոց Երևանայ, որով թոյլատրեցաւ բանալ զմիդասեան երկսեռից եկեղ. ծխակ. ուսումնարան ի գաւթի սուրբ Շմաւոն Եկեղեցւոյ Փառակայ գեղջ և հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան յիշեալ ուսումնարանի բարեկրօն Գասպար քահա-

նայն Տէր Աւագեան, երեցփոխան եկեղեցւոյն և յարգելիքն՝ Սամուէլն Յարութիւնեանց և Ղևոնդն Մկրտչեան Յակոբեանց. իսկ յանձնափոխանորդ վերջնոցս՝ պատուելի Կարապետն Սարգսեան Կարապետեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 29 օգոստ. ընդ համարաւ 347 յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Վրաստանի և Իմերէթի, որով թոյլատրեցաւ բանալ ի Մանգլիս տանի զմիդասեան միացեալ եկեղ. ծխակ. ուսումնարան։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 29 օգոստ. ընդ համարաւ 348 յանուն Գեր. Առաջնորդի Թեմակալին Հայոց Երևանայ, որով հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղ. ծխակ. երկսեռից ուսումնարանաց Ս. Յովհաննէս եկեղեցւոյ Հայոց Գանձակ քաղաքի բարեկրօն Գրիգոր քահանայն Թումանեանց, յարգելի երեցփոխան եկեղեցւոյն և պատուելիքն՝ Ներսէն Տէր Ներսէսեանց և Կարապետն Փաթալեան. իսկ յանձնափոխանորդս վերջնոցս՝ յարգելիք՝ Յակոբն Տէր Յարութիւնեանց և Միքայէլն Համասիրեանց։

—

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 29 օգոստոսի ընդ համարաւ 344 յանուն Գեր. Առաջնորդի Թեմին Հայոց Արցախոյ, որով հաստատեցաւ ի պաշտօն Թեմ. Տեսչութեան եկեղ. ծխակ. ուսումնարանաց Հայոց վիճակին բարեկրօն Պետրոս քահանայն Տէր Յովհաննիսեանց Խան - քեանդ գեղջ։

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

22 Օգոստոսի. ըստ կոնդակի Նորին Վեհափառութեան, ընդ համարաւ 322, Երևանի վիճակի փոխանորդ Գերապատիւ Սուքիաս Եպիսկոպոսը վերակոչուեց յԷջմիածին ի վարուժն անդամական պաշտաման Սինոդոսում։

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։